

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՎԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ԲՆ-ԴՇ-18/01**

ք. Երևան

« 12 » « փետրվարի » 2018թ.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Հ.Հովհաննիսյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Վ.Սահակյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1717-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն» ծրագրի՝ բաժին 05, խումբ 04, դաս 01, ծրագիր 07 (շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության միջոցառումների իրականացում, այսուհետ՝ Ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ մինչև **45 250 400 (քառասունհինգ միլիոն երկու հարյուր հիսուն հազար չորս հարյուր) ՀՀ դրամ** գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2. Ծրագրով նախատեսված Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված N 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

- 2.1. **Պետական մարմինն իրավունք ունի՝**
 - 2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.
 - 2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.
 - 2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
 - ա) Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
 - բ) Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),
 - գ) իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.
 - 2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:
- 2.2. **Կազմակերպությունն իրավունք ունի՝**
 - 2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.
 - 2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:
- 2.3. **Պետական մարմինը պարտավոր է՝**
 - 2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.
 - 2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.
 - 2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.
 - 2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 օրացուցային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:
- 2.4. **Կազմակերպությունը պարտավոր է՝**
 - 2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառումը հաշվապահական հաշվառման վարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.
 - 2.4.2. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.



- 2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները:
- 2.4.4. Պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին աճողական հաշվետվություններ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ 4-րդ եռամսյակինը՝ մինչև դեկտեմբերի 15-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ 20-օրյա ժամկետում ամփոփ հաշվետվություն:
- 2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:
- 2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:
- 2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:
- 2.4.8. սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում գոյացած խնայողություններն ուղղել իր կանոնադրական գործառույթների իրականացմանը՝ նախապես համաձայնեցնելով Պետական մարմնի հետ:

3. Մոնիթորինգ

- 3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
- 3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
- 3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությունը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
- 3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
- 3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

- 4.1. Սույն պայմանագրի Հավելված N*2-ով հաստատված, տվյալ եռամսյակին բաժին ընկնող գումարը յուրաքանչյուր ամսվա առաջին 5 աշխատանքային օրվա ընթացքում, հավասար մասնաբաժիններով Պետական մարմինը փոխանցում է Կազմակերպության բանկային հաշվին՝ որպես տվյալ եռամսյակի կանխավճար:
- 4.2. Եթե Կազմակերպությունը տվյալ եռամսյակի համար նախատեսված միջոցառումները
 - ա) իրականացրել է ամբողջությամբ և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով:
 - բ) ամբողջությամբ չի իրականացրել, ապա կիրառվում է սույն պայմանագրի 2.1.2 և (կամ) 2.4.6 կետերով սահմանված պայմանները և իրականացված միջոցառումների արժեքի չափով Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, իսկ հաջորդ կանխավճարը վճարվում է չիրականացված միջոցառման չափով պակաս և սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով:
 - գ) իրականացրել է նախատեսվածից ավելի և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով, իսկ ավելի իրականացված միջոցառման չափով վճարումն իրականացվում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 20-ը, սակայն ոչ ավելի սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված գումարից:

5. Կողմերի պատասխանատվությունը

- 5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է ստացված ֆինանսական աջակցության գումարները չիրականացված միջոցառման չափով վերադարձնել Պետական մարմնին և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելից գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

- 6.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2018 թվականի հունվարի 8-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

- 7.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու սույն պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

- 8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (Հավելված №2) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.2. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
- 8.3. Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում գոյացած խնայողությունները Կազմակերպությունը ուղղում է իր կանոնադրական գործառույթների իրականացմանը:
- 8.4. Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ: Սույն պայմանագրի Հավելվածներ №№1-ը և 2-ը համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:


9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

«Հանրապետության նախարարություն»

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011000875
ՀՎՀՀ 02507198

«Հանրապետության նախարարության



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ

ք.Երևան, Կոմիտաս 29


«Ինտելիգենցի» ՓԲԸ


ՀՀ 2050042013021001

ՀՎՀՀ 02540474

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Վ.Սահակյան





ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Իրականացվելիք միջոցառման

NN հ/հ	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման երթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա-ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ ներկայացվող նախատեսվող գործունեությունների Ա, Բ, Գ կատեգորիաների և հիմնադրության փաստաթղթերի նախնական գնահատման հայտերի և գնահատման հաշվետվությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն	Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և իր կանոնադրության՝ իրականացնում է ՀՀ տնտեսական, սոցիալական և այլ նախատեսվող գործունեությունների և տնտեսության ընագավառների վերաբերող հիմնադրության փաստաթղթերի փորձաքննություն:	Նախատեսվող գործունեությունների Ա, Բ, Գ կատեգորիաների և հիմնադրության փաստաթղթերի նախնական գնահատման հայտերի և գնահատման հաշվետվությունների ուսումնասիրություն և վերլուծություն: Նախատեսվող գործունեության նախնական հայտի փորձաքննության իրականացման արդյունքում տեխնիկական առաջադրանքի կազմում և տրամադրում Ձեռնարկողին: <ul style="list-style-type: none"> ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության իրականացման արդյունքում փորձաքննական եզրակացության նախագծի կազմում: Փորձաքննական եզրակացության նախագծի ներկայացում ՀՀ քննապահականության նախարարի հաստատմանը, իսկ անդրահամայնի ազդեցություն ունեցող հիմնադրության փաստաթղթի կամ գործունեության դեպքում ՀՀ կառավարության հաստատմանը: Հաստատումից հետո եզրակացության տրամադրում Ձեռնարկողին: 	Փորձաքննության նախնական և հիմնական փուլերում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական գործընթացի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կրճատում, մեղմում, կանխարգելում:	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներ: Նախատեսվող գործունեությունների Ա կատեգորիայի և հիմնադրության փաստաթղթերի հիմնական փուլի համար մինչև 60 աշխատանքային օր: Անհրաժեշտության դեպքում մինչև 100 աշխատանքային օր:	45250400

			<ul style="list-style-type: none"> Նախատեսվող գործունեությունների, հիմնադրության փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման նախնական և հիմնական փուլերում շահագրգիռ ազդակիր համայնքների և համայնքատարած հանրության ներգրավում, հանրային ծանուցման կազմակերպում, կազմակերպության կողմից հանրային քննարկումներին իր մասնագետի մասնակցության ապահովում: Մասնակցություն փորձաքննության գործընթացին վերաբերող ըարթաքննության և փորձաքննության գործընթացը կարգավորող իրավական ակտերի մշակմանը: Նախատեսվող գործունեությունների, հիմնադրության փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման գործընթացում պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, փորձագետների (իրավաբանական կամ ֆիզիկական անձ) ներգրավում: ՀՀ քննապահականության նախարարության ստորաբաժանումների կողմից մշակված և ոլորտներին առնչվող նորմատիվ ակտերի վերաբերյալ կարծիքների տրամադրում և այլ հանձնարարականների կատարում: 		Նախատեսվող գործունեությունների հիմնական փուլի Բ կատեգորիայի համար մինչև 40 աշխատանքային օր: Անհրաժեշտության դեպքում մինչև 70 աշխատանքային օր: Նախատեսվող գործունեությունների նախնական փուլի Ա, Բ, Գ կատեգորիաների և հիմնադրության փաստաթղթերի համար մինչև 30 աշխատանքային օր:	45 250 400
ԸՆԴԱՄԵՆԸ						

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
 ՀՀ բնապահպանության նախարարության
 աշխատակազմի ղեկավար
Հ. Հովհաննիսյան
 (ստորագրություն)
 Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության
 փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Վ. Սահակյան
 (ստորագրություն)
 Կ.Տ.

ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր

Ծրագրային դասիչը	Անվանումը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		1 եռամսյակ	1 կիսամյակ	9 ամիս	Տարի	1 եռամսյակ	1 կիսամյակ	9 ամիս	Տարի
1016	ԱԾ04 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության միջոցառումներ								
Չափորոշիչներ									
Քանակական	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեությունների և հիմնադրությային փաստաթղթերի նախնական գնահատման հայտերի և գնահատման հաշվետվությունների եզրակացություններ /հատ/այդ թվում՝	25	50	75	100				
	1. Ա կատեգորիայի գնահատման հաշվետվություններ	6	13	18	23				
	2. Բ կատեգորիայի գնահատման հաշվետվություններ	2	4	5	7				
	3. Գ կատեգորիայի գնահատման հաշվետվություններ	14	28	45	60				
	4. Դ կատեգորիայի գնահատման հաշվետվություններ	3	5	7	10				
	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեությունների և հիմնադրությային փաստաթղթերի նախնական գնահատման հայտերի տեխնիկական առաջադրանքներ /հատ/այդ թվում՝	14	28	42	54				
	1. Ա կատեգորիա	8	16	24	32				
	2. Բ կատեգորիա	2	4	6	8				
	3. Հիմնադրությային փաստաթղթեր	4	8	12	14				

Որակական	Համապատասխանությունը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՄԱԿ-ի «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկություն, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցություն և արդարադատության մատչելիության մասին» (Օրիտա), «Անդրսահմանային համատեքստում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» (ԷՄՊՈ) կոնվեցիաների և դրան կից ռազմավարական էկոլոգիական գնահատման արձանագրության պահանջներին, %				100				
Ժամկետայնության	Նախատեսվող գործողությունների և հիմնադրությային փաստաթղթերի նախնական փուլի համար «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներ (մինչև օր)				30				
	Նախատեսվող գործողությունների Ա կատեգորիայի և հիմնադրությային փաստաթղթերի հիմնական փուլի համար «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներ (մինչև օր)				60				
	Նախատեսվող գործողությունների Բ կատեգորիայի հիմնական փուլի համար «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներ (մինչև օր)				40				
Իրականացվող միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	8145.1	18552.7	30770.3	45250.4
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը									
1016 Շրջակա միջավայրի պահպանության, մոնիթորինգի և տեղեկատվական վերլուծական միջոցառումներ									
Վերջնական արդյունքի նկարագրությունը									
Շրջակա միջավայրի վրա ազդեցության կրճատում/մեղմում									
Միջոցառումն իրականացնողի անվանումը									
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ									